ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237) 3 44 41 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հոկտեմբերի 2021 թվականի N 290 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ N 35-Ն որոշման 8-րդ կետը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. *Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի 2021 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում՝ համաձայն հավելվածի.*

2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

Համայնքի ղեկավար՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 22 -ին

ք. Մեծամոր

Հավելված

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ղեկավարի 2021 թվականի հոկտեմբերի 22-ի
N 290 -Ա որոշման

Մեծամոր համայնքի 2021 թվականի բյուջեում վերաբաշխում

Համայնքի Վարչական բյուջեի ծախսային մասում «Կրթություն» ծրագրի բաժին 09 խումբ 1 դաս 1 4251 հոդվածից պակասացնել 1500,0 հազ /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ, ավելացնել «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ծրագրի բաժին 01 խումբ 1 դաս 1 4212 հոդվածին 1400,0 հազ. /մեկ միլիոն չորս հարյուր հազար / ՀՀ դրամ, 4213 հոդվածին 100,0 հազ. /հարյուր հազար/ ՀՀ դրամ, «Հանգիստ, մշակույթ, կրոն» ծրագրի բաժին 08 խումբ 2 դաս 3 4111 հոդվածից պակասեցնել 200,0 հազ. /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ և ավելացնել 4213 հոդվածին:

Ֆոնդային բյուջեի ծախսային մասում «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն» ծրագրի բաժին 06 խումբ 1 դաս 1 5134 հոդվածից պակասեցնել 470,0 հազ. /չորս հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ և ավելացնել 5113 հոդվածին:

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Թադևոսյան